ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Նորին Վսեմափայլութեան Քաղաքագլխոյն Պետրոգրադի՝ Հօփմէյստեր Պալատական Նորին Կայսերական Մեծութեան՝ *Կոմս Իվան Իվանովիչ Տօլստոյի ողջոյն Քրիստոսաւանդ և օրհնութիւն Հայրապետական։*

Յայտնի է Վսեմափայլութեան Ձերում պատմական կացութիւն անցելոյ և ներկայիս Ազգիս Հայոց։ Յընթացս դարուց ընդ ծանր լծով Տաճիկ կառավարութեան բազմաչարչար հօտն իմ զրկեալ ի հասարակ իրաւանց մարդկայնոց, զապահովութենէ ասեմ պատուոյ, կենաց և ընչից իւրոց, ոչ կարէր խորհել ազատաբար և գործել անդորր հոգւով վասն ազգային յառաջդիմութեան իւրոյ և վերածնութեան։ Իսկ այժմ տարաբախտ հոգևոր զաւակունք

իմ առաւել ևս անգթաբար հալածին և տանջին՝ անզէն, անպաշտպան ի ձեռն աւազակաբարոյ քրդաց և տաճիկ պաշտօնէից, որք ոչ անխային մինչ իսկ յանօգնական կանայս և յանմեղ մանկունս, յորոց յափշտակեալ բազում, կրօնափոխ առնեն բռնութեամբ և դանիւ։

Եւ զայսպիսի գազանութիւնս և դանդթութիւնս, զորս գործեն ընդ անզէն և անպաշտպան քրիստոնեայ ժողովրդեան, արդարացուցանեն այնու, եթէ Հայք համակիրք և աջակիցք հանդիսանան Մեծին Ռուսիոյ և ամին Դաշնակից պետութեանց։

Ի ժամ ծանրագոյն փորձութեանց և հալածանաց, յարուցելոց ի վերայ հօտին իմոյ, Դուք, Վսեմափայլ Տէր, ընդ արժանաւոր ներկայացուցիչս Ինքնավարութեան Պետրոգրադ Մայրաքաղաքիդ, հաճեցայք հասանել յօգնութիւն, նուիրաբերելով զյիսուն հազար ռուբլիս յօգուտ փախստականաց մերոց, որք կորուսին զամենայն ինչս՝ զտունս, զստացուածս, իսկ բազումք ի տոցանէ նաև զսիրելիս իւրեանց։

Յայդ նուիրաբերեալ գրամոց ընկալայ ի Գանձապահէ պ. Յակոբայ Յովսէփեան Ղուկասեանէ զքառասուն և զեօթն հազար (47000) ռուբլիս։

Բարի ուշադրութեամբ և քրիստոնէական գործով ցուցիք տառապելոց և նեղելոց զմարդասէր վերաբերմունս Ձեր և ոչ թողիք առանց խնամոց զվիրաւորս ի ձեռաց աւազակաց, այլ, ըստ օրինակի ողորմած Սամարացւոյն, որ ի Սբ. Աւետարանի, եդիք ապեղանիս նիւթականս և բարոյականս ի վերայ անթիւ վիրաց բազմաչարչար ժողովրդեան Հայաստանեայց։

Զայս քրիստոնէական և զմարդասէր գործ պատկառելի քաղաքային Դումայի Մեծի Մայրաքաղաքիդ՝ ընդ արժանաւոր և հեղինակաւոր նախագահութեամբ Ձերով, ոչ երբէք տաց ի մոռացուն, զի ելից զսիրոս համայն Հայոց զգացմամբ երախտագիտութեան առ Ձեզ և առ քրիստոսասէր ժողովուրդն Ռուսաց։

Վասն որոյ՝ Մեք Ծայրագոյն Պատրիարք, Կաթուղի-

կոս Ամենայն Հայոց և Պետ Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց, այսու Հայրապետական Կոնդակաւս յայտնեմք Ձերումդ Պայծառափայլութեան ի ձեռն Ձեր ամենայն արժանընտիր անդամոց Ինքնավարութեանն Մայրաքաղաքիդ՝ զսրտագին շնորհակալիս Մեր և համայն հօտին Մերոյ. օրհնելով զամենեսեանդ և մաղթելով ի Տեառնէ Մեծարգոյ անդամոց քաղաքային Դումայի կար և զօրութիւն, իմաստութիւն և կորով բարոյական՝ յօգուտ և ի փառս Մեծին Ռուսիոյ։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Ի 5 յունիսի 1915 ամի
և ըստ Տոմարիս ՌՅԿԴ.
ի Հայրապետութեան Մերում Դ. ամի
Գրիգոր Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 967

ԳՐԻԳՈՐ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ Կամօք Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Նորին Վսեմափայլութեան պատուաւոր Նախագահի Ցանձնաժողովոյ Օգնութեան Հայոց՝ Քաղաքագլխոյն Պետրոգրադի՝ Հօֆմէյստեր Պալատան Նորին Կայսերական Մեծութեան Կոմս Իվան Իվանովիչ Տօլստոյի, Նոցին Գերազանցութեանց Նախագահի Դորին՝ Անդամոց Պետական Խորհրդոյ Իսկական Գաղտնի Խորհրդականի Սենատոր Նիկոլայ Ստեպանովիչ Տագանցևի և օգնականացն՝ Սենատոր Սերգէյ Վալենտինովիչ Իվանովի, Անդամոց Պետական Խորհրդոյ ուսուցչապետ Ալէքսանդր Վասիլևիչ Վասիլևի, ուսուցչապետ Միխայէլ Իվանովիչ Ռոստովցևի և

Պօղոս Յովսէփեան Ղուկասեանի, ողջոյն Քրիստոսաւանդ և օրհնութիւն Հայրապետական։

Յաւուրս ծայրագոյն փորձութեանց, յորոց զնմանն անհնարին է տեսանել ի համաշխարհային պատմութեան, ուրախանամք յոյժ տեսեալ յամենայն կողմանս Մեծին Ռուսիոյ զբարոյական միութիւն և զկորով, զհերոսական քաջութիւնս և զկատարու�համապետական պարտականութեանց ի փառս Մեծի Հայրենեաց մերոց։ Հանդէպ արհաւրաց և աղէտից առանձին մխիթարութեամբ հոգւոյ տեսանեմք նաև զճշմարիտ գործս մարդասիրութեան և քրիստոնէական բարոյականութեան, որք իրաւամբ յիշեցուցանեն զսուրբ Բանս Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի առ մարդկութիւնն տառապեալ... «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»։

Ապաքէն, որչափ բազմաթիւ են այժմ թշուառք, վաստակեալք և բեռնաւորք, ընդ որպիսի բեռամբ բարոյական և նիւթական զրկանաց տանջին բիւրաւոր մարդիկ և քանի՜ սոսկալի է և աննկարագրելի աւերումն շէն քաղաքաց և գիւղօրէից և ոչնչացումն դարաւոր քաղաքակրթութեան։

Առանձնապէս դժբախտացեալ կան բնակիչք քաղաքաց և գիւղօրէից, որք ի սահման մեծի պատերազմին կան, որ վիճակեցաւ նաև համայն Ռաճկա-Հայաստանի։ Յընթացս դարուց երկիրս այս ընդ ծանու լծով տաճիկ կառավարութեան հեծէ, աւերի և իսպառ քայքայի մնտեսապէս, իսկ բազմաչարչար հօտն իմ, հանապազ զրկեալ ի մարդկային տարրական իրաւանց, այժմ մատնեալ կայ սոսկալի տանջանաց, զորս չէ մարթ ի գիր առնուլ։ Բաւ է յիշել սաս, զի վայրենաբարոյ քուրդք և տաճիկ պաշտօնեայք, զրդմամբ Կառավարութեան տաճկաց, անգթաբար կոտորեն զխաղաղ և զանզէն զքրիստոնեայ ժողովուրդն Հայոց, ոչ խնայելով մինչև իսկ յանօգնական կանայս և յանմեղ մանկունս, յորոց բազումս յափշտակեալ բռնութեամբ ածեն ի մահմեդականութիւն։

Յայտոսիկ դառնադէտ աւուրս, վիճակեալս հօտին

իմում, Դուք, ողորմած Տեարք, որպէս արժանաւոր ներկայացուցիչք Մեծի ժողովրդեան Ռուսաց, մարդասիրաբար հաճեցայք լինել նախաձեռնողք և կազմակերպիչք քրիստոնէական գործոյն յօգուտ և ի մխիթարութիւն տառապեալ փախստականաց Հայոց, հրաւիրելով զբնակիչս Պետրոգրադի օգնել նոցա։

Եւ ի հեղինակաւոր հրաւէրն Ձեր և ներկայացուցչաց մամլոյ բնակիչք Մայրաքաղաքիդ, առանց խտրութեան կրօնի և ազգութեան, փութացին հասանել յօգնութիւն դրամով և իրեղինօք։

Յիւրուն ժամանակի ընկալայ ի Յանձնաժողովոյդ ձերմէ զեօթանասուն և զեօթն հազար (77000) ռուբլիս և բազում իրս և հանդերձեղէն յօգուտ գաղթականաց Հայոց։

Յոյժ զգացեալ ի բարի ուշադրութենէդ որպէս եւ, նոյնպէս և ժողովուրդն Հայոց ոչ երբէք տացուք ի մոռացոնս, եթէ շնորհիւ բարեացակամ կառավարութեան Ձերոյ և օժանդակութեան բարի անձանց՝ բազումք ի փախստական գաղթականաց Հայոց՝ ծերք և տղայք, կանայք և օրիորդք փրկեցան յանտանելի պայմանաց կենաց։ Եւ որ առաւել գնահատելին է, Դուք, ողորմած Տեարք և բնակիչք Պետրոգրադի բարոյապէս մխիթարեցիք զհօտն իմ, որ յայսմ պատմական վայրկենի ամենայն պատրաստակամութեամբ առաքէ զկամաւորս իւր ընդ քաջարի զօրաց Ռուսաց ընդդէմ թշնամեաց և կատարէ զսրբազան պարտիս իւր առաջի մեծի Թագաւորին մերոյ և հայրենեաց։

Ուստի Մեք՝ Ծայրագոյն Պատրիարքք, Կաթուղիկոս Ամենայն Հայոց և Պետ Առաքելական Եկեղեցւոյ Հայոց, այսու Հայրապետական կոնդակաւս յայտնելով Ձեզ և ի դէմս Ձեր՝ աջակցողաց և ամենայն նուիրատուաց զսրտագին շնորհակալիս Մեր և համայն Ազգին Հայոց, օրհնեմք զամենեսեան և զթանկագին կեանս Ձեր։

Աղօթս վերառաքեմք առ Ամենաբարձրեալն Աստուած անցուցանել զբաժակն փորձութեանց և արհաւրաց ի Հայրենեաց մերոց և շնորհել քաջարի զօրաց Ռուսաց զյաղ-

թութիւն ընդդէմ թշնամեաց ի փառս Մեծին Ռուսիոյ, զի հաստատեցի խաղաղութիւն մշտատև յերկրի և արդարութիւն ի մէջ ազգաց։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

Ի 5 յունիսի 1915 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՃԿԴ
ի Հայրապետութեան Մերում Դ. ամի
Աբրահամեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 968

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ալէքսան Վերդիեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների տասն և եօթ (17) ռուբլին, առաջադրելով մոց մատեանում մուտք գրել և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 4 մայիսի, թ. 786։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետերբուրգի Հայկական հիւանդանոցի Յանձնաժողովի Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի միջոցով ուղարկած յօգուտ հայ գաղթականների երեք հարիւր (300) ռուբլին, առաջադրելով մուծել մոց մատեան և անդորրագիրն ուղարկել յիշեալ Յանձնաժողովին։ 4 մայիսի, թ. 787։

Դիւանի գրութիւն Վրաստանի թեմական Առաջնորդի անունով, որով առաջադրուեց յայտնել Գանձակեցի Վասիլ Անանեանին Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցուն նուիրած մի ջանի համար։ 4 մայիսի, թ. 789։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան ոչ. Նիկողայոս Առաքելեանի անունով՝ Բագուի ս. Լուսաւորիչ եկե-